



Մաթեմատիկա
4-րդ դասարան

Մաթեմատիկան բոլոր գիտությունների թագուհին է:
Կ. Գաուս

1. Հողամասի գծագրին համապատասխան՝ հաշվի՛ր ցանկապատի երկարությունն ու մակերեսը:
/3 միավոր/



2. Փորձի՛ր 4 հատ 3 թվանշանով և թվաբանական գործողություններով ստանալ 1-ից մինչև 5 թվերը: Կարող ես օգտագործել նաև փակագծեր: /2,5 միավոր/

_____ = 1
 _____ = 2
 _____ = 3

_____ = 4
 _____ = 5

3. Աստղանիշերի փոխարեն այնպիսի թվանշաններ տեղադրիր, որ գործողությունը ճիշտ լինի:
/2,5 միավոր/

			*	*	*			
		x						
			<u>2</u>	*	<u>7</u>			
			*	*	*	*		
	+							
			<u>*</u>	<u>*</u>	<u>*</u>			
			*	*	8	3	5	

4. 3 հավը 3 օրում 3 ձու են ածում: 15 հավը 15 օրում քանի՞ ձու կածեն: /2 միավոր/

Պատասխան՝ _____

5. Գտի՛ր օրինաչափությունը և ավելացրո՛ւ ևս երեք անդամ: /1,5 միավոր/

3; 8; 23; 68; ---- ; ---- ; ---- :

6. Վանդակում գտնվող ճագարների ոտքերի քանակը 15-ով մեծ է նրանց գլուխների քանակից: Քանի՞ ճագար կա վանդակում: /2 միավոր/

Պատասխան՝ _____

7. ա) Գտի՛ր արտահայտությունների արժեքները. /2 միավոր/
 $(49956 + 34 \cdot 6) : 76 - 36 =$

$$207 \cdot (1472 - 667) - 75199 \cdot 2 =$$


բ) Ստացված պատասխանները գրի՛ր հերթականությամբ՝ մեկ տողում.

գ) Թվանշանների փոխարեն տեղադրի՛ր համապատասխան տառերը.

1-ր 2-ն 3-ի 4-դ 6-ա 7-կ


դ) Ստացված բառը գրի՛ր. _____

8. Այգեպանը քառակուսաձև այգու ցանկապատի երկայնքով 12 ծառ տնկեց: Գծագրի վրա պատկերի՛ր, թե ինչ եղանակով ևս տնկեց ծառերը, եթե գիտենք, որ այգու բոլոր կողմերի երկայնքով տնկեց 4 ծառ: /2.5 միավոր/




9. Օգտվելով նկարներում բերված տվյալներից՝ որոշի՛ր մրգերից յուրաքանչյուրի արժեքը:

/ 2 միավոր/



340 դրամ





420 դրամ



480 դրամ

Պատասխան՝  = _____ դրամ,

 = _____ դրամ,

 = _____ դրամ:

Ընդհանուր միավորը՝ _____

Ամիս, ամսաթիվ _____

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Դպրոց _____

Դասարան _____